Կից ներկայացվում է սույն տեղեկանքում նշված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

առաջին տեղը զբաղեցրած մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրություն

Կ. Տ.¹⁰

¹⁰ սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը փեղեկագրում հրապարակելը:

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

N _____

Ք. _____

«___» _____ 20 թ.

«_____», ի դեմս ----- ի, որը գործում է ----- կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և -----ն, ի դեմս տնօրեն -----ի, որը գործում է ----- կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի վարչական շրջանների ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և **կատարման ժամկետը է սահմանվում է՝ համաձայն հավելված թիվ 2-ի:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն ----- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ----- (-----) ՀՀ դրամ, որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին (.....) ՀՀ դրամ՝ որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

n-րդ չափաբաժին (.....) ՀՀ դրամ՝ որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով¹¹:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

¹¹ Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը կնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում¹²:

¹² Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները¹³:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

¹³ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համապետ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

Նախահաշիվ - ծավալաթերթ

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ

ՀՀ դրամ

N/N	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	Բակային ճանապարհների ,տարածքների և մայթերի ասֆալտբետոնյա ծածկի քանդում, բարձում, տեղափոխում թափոնատեղ,, անհրաժեշտության դեպքում խճի հիմքի իրականացում մինչև 10% ասֆալտբետոնյա ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ	քմ	8996	2944	26484224
	Ընդամենը				26484224
	Շահույթ 11 %				2913264.64
	Ընդամենը				29397488.64
	ԱԱՀ 20 %				5879497.73
	Ընդամենը				35276986.37

Տեխնիկական Բնութագիր

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ

Բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ

1. Նախապատրաստական աշխատանքներ կոմպրետորով,
2. Դիտահորերի և անձրևատրսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում,
3. Բոլոր ճաքերի համատարած ճաքալցում, փոսային նորոգում,
4. Գոյություն ունեցող ծածկի մաքրում կեղտից, փոշուց և առաջացած ասֆալտբետոնյա կտորներից,
5. Մայթերում անհրաժեշտության դեպքում ա/բ ծածկի քանդում, խճե հիմքի ուղղում խճով/բազալտե, 20-40սմ/ կամ ֆրեզավորված ասֆալտբետոնով,
6. Երթևեկելի մասի հիմնատակի մշակում բիտումային էմուլսիայով,
7. Վերոգրյալ աշխատանքների թաքնված աշխատանքների ակտը տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպության և պատվիրատուի կողմից հաստատելուց հետո իրականացնել ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի տեղադրում 3-4սմ հաստությամբ/մայթեր, բակեր մանրահատիկ, միջբակային ճանապարհներ՝ միջնահատիկ/:
8. Շին աղբի բարձում և տեղափոխում,

9. Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Երևանի քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի կողմից տրվող պատվեր-առաջադրանքների հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1. Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան,
2. Կապալառուն, պատվեր-առաջադրանքը ստանալուց հետո, պատվիրատուին է ներկայացնում կատարվելիք աշխատանքների սխեմատիկ հատակագիծը և նախատեսված ա/բ խառնուրդի բաղադրության ընտրության արդյունքները:
3. Կապալառուն աշխատանքները սկսելուց առաջ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության և Պատվիրատուի ներկայացուցչի հետ միասին, տեղում ուսումնասիրում է և սխեմատիկ հատակագծի վրա նշում է կատարվելիք աշխատանքների տեղը և ծավալները, ներկայացնում Պատվիրատուի հաստատմանը,
4. Օբյեկտի ավարտը փաստագրելու համար Կապալառուն գրավոր Պատվիրատուին է ներկայացնում կատարողական գծագրերը, ամբողջ գործընթացի լուսանկարները, թաքնված աշխատանքների ակտերը, օգտագործված շինարարական նյութերի որակը հավաստող փաստաթղթերը ճշգրիտ և լրիվ գրառումներով (երկու օրինակից),
5. Օբյեկտը ավարտված է համարվում օբյեկտի ավարտը փաստագրող համապատասխան ակտը պատվիրատուի կողմից հաստատելուց հետո:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման և պահպանման աշխատանքներ

(հազ. դրամ)

N	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Չ/Մ	ՔԱՆԱԿ	ՄԻԱՎՈՐԻ ԳԻՆԸ	ԸՆԴԱՄԵՆԸ
1	Բակային ճանապարհների, տարածքների և մայթերի ասֆալտբետոնյա ծածկի քանդում, բարձում, տեղափոխում թափոնատեղ, անհրաժեշտության դեպքում խճի հիմքի իրականացում մինչև 10% ասֆալտբետոնյա ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ	քմ	10000	3000	30.000,0
	շահույթ 10%				3.000,0
	ընդամենը				33.000,0
	ԱԱՀ 20%				6.600,0
	ԸՆԴԱՄԵՆԸ				39.600,0

Տեխնիկական Բնութագիր

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման և պահպանման աշխատանքներ

10. Նախապատրաստական աշխատանքներ կոմպրեսորով և ֆրեզով,
11. Դիտահորերի և անձրևաորսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում,
12. Բոլոր ճաքերի համատարած ճաքալցում, փոսային նորոգում,
13. Գոյություն ունեցող ծածկի մաքրում կեղտից, փոշուց և առաջացած ասֆալտբետոնյա կտորներից,

14. Մայթերում անհրաժեշտության դեպքում ա/բ ծածկի քանդում, խճե հիմքի ուղղում խճով կամ ֆրեզավորված ասֆալտբետոնով,
15. Երթևեկելի մասի հիմնատակի մշակում բիտումային էմուլսիայով,
16. Վերոգրյալ աշխատանքների թաքնված աշխատանքների ակտը տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպության և պատվիրատուի կողմից հաստատելուց հետո իրականացնել ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի տեղադրում 3-4սմ հաստությամբ,
17. Շին աղբի բարձում և տեղափոխում,
18. Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի կողմից տրվող պատվեր-առաջադրանքների հիման վրա:

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

6. Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան,
7. Կապալառուն, պատվեր-առաջադրանքը ստանալուց հետո, պատվիրատուին է ներկայացնում կատարվելիք աշխատանքների սխեմատիկ հատակագիծը և նախատեսված ա/բ խառնուրդի բաղադրության ընտրության արդյունքները:
8. Կապալառուն աշխատանքները սկսելուց առաջ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության և Պատվիրատուի ներկայացուցչի հետ միասին, տեղում ուսումնասիրում է և սխեմատիկ հատակագծի վրա նշում է կատարվելիք աշխատանքների տեղը և ծավալները, ներկայացնում Պատվիրատուի հաստատմանը,
9. Օբյեկտի ավարտը փաստագրելու համար Կապալառուն գրավոր Պատվիրատուին է ներկայացնում կատարողական գծագրերը, ամբողջ գործընթացի լուսանկարները, թաքնված աշխատանքների ակտերը, օգտագործված շինարարական նյութերի որակը հավաստող փաստաթղթերը ճշգրիտ և լրիվ գրառումներով (երկու օրինակից),
10. Օբյեկտը ավարտված է համարվում օբյեկտի ավարտը փաստագրող համապատասխան ակտը պատվիրատուի կողմից հաստատելուց հետո:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ- ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման և պահպանման աշխատանքներ

ՀՀ դրամ

h/h	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի գինը	Ընդամենը
1	<i>Բակային տարածքների և մայթերի ասֆալտբետոնյա ծածկի քանդում, բարձում, տեղափոխում թափոնատեղ անհրաժեշտության դեպքում խճե հիմքի իրականացում մինչև 10% ա/բ ծածկի իրականացում 3-4 սմ հաստ.</i>	<i>քմ</i>	14231.29	3002.99551	42736500
	<i>Ընդամենը`</i>				42736500
	<i>Շահույթ 11 %</i>				4701015
	<i>Ընդամենը</i>				47437515
	<i>ԱԱՀ 20%</i>				9487503
	<i>Ընդամենը`</i>				56925018

Տեխնիկական Բնութագիր

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման և պահպանման աշխատանքներ

Գնման առարկա է հանդիսանում Արաբկիր վարչական շրջանի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգումն ու պահպանումը:

Անհրաժեշտ է իրականացնել նախապար- րաստական աշխատանքներ կոմպրեսորով, դիտահորերի և անձրևարտիչների նիշերի ուղղում և վերափոխում, ճաքերի ճաքալցում և փոսային նորոգում, ծածկի մաքրում կեղտից և փոշուց, անհրաժեշտության դեպքում մայթերի ա/բ ծածկի քանդում, երթևեկելի մասի հիմնահատակի մշակում բիտումային էմուլսիայով: Վերոգրյալ թաքնված աշխատանքների ակտը տեխնիկական հսկողությունը իրականացնող կազմակերպության և Պարվիրատուի կողմից հաստատվելուց հետո իրականացնել ա/բ վերին շերտի փոխարինում 3-4 սմ հաստությամբ, անհրաժեշտության դեպքում խճե հիմքի իրականացում մինչև 10%, շինարարի բարձրում և տեղափոխում թափոնատեղ: Աշխատանքները իրականացնել Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից փորձող պարվեր- առաջադրանքների հիման վրա՝ շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան: Կապալառուն, պարվեր-առաջադրանքը ստանալուց հետո, Պարվիրատուին է ներկայացնում կարտվելիք աշխատանքների սխեմատիկ նախագիծը և նախատեսված ա/բ խառնուրդի բաղադրության ընտրության արդյունքները: Կապալառուն աշխատանքները սկսելուց առաջ տեխնիկական հսկողությունը իրականացնող կազմակերպության և Պարվիրատուի ներկայացուցչի հետ միասին տեղում ուսումնասիրում է սխեմատիկ հարակազմի վրա նշված կարտվելիք աշխատանքների տեղը և ծավալները, ներկայացնում Պարվիրատուի հաստատմանը: Օբյեկտի ավարտը փաստագրելու համար Կապալառուն գրավոր Պարվիրատուին է ներկայացնում կարտողական ծրագրերը, ամբողջ գործընթացի լուսանկարները, թաքնված աշխատանքների ակտերը, օգտագործված շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթերը ճիշտ և լրիվ գրառումներով /երկու օրինակից/: Օբյեկտը ավարտված է համարվում օբյեկտի ավարտը փաստագրող համապատասխան ակտը Պարվիրատուի կողմից հաստատվելուց հետո:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևանի Էրեբունի վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքների

<< դրամ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չ/մ	Քանակը	Մ/գ	Ընդամենը
	Բակային ճանապարհների, տարածքների և մայթերի ասֆալտբետոնյա ծածկի քանդում, բարձում, տեղափոխում թափոնատեղ, անհրաժեշտության դեպքում խճե հիմքի իրականացում մինչև 10% ասֆալտբետոնյա ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ	թ/Մ	11385	3003	34189155
	ԸՆԴԱՄԵՆԸ				34189155
	ՇԱՀՈՒՅԹ 11 %				3760825
	ԸՆԴԱՄԵՆԸ				37950000
	ԱԱՀ 20 %				7590000
	ԸՆԴԱՄԵՆԸ		11385	4000	45540000

Տեխնիկական Բնութագիր

Երևան քաղաքի **Էրեբունի վարչական շրջանի** բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ

Նախապատրաստական աշխատանքներ կոմպրեսորով,
 Դիտահորերի և անձրևառոսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում,
 Բոլոր ճաքերի համատարած ճաքացում, փոսային նորոգում,
 Գոյություն ունեցող ծածկի մաքրում կեղտից, փոշուց և առաջացած ասֆալտբետոնյա կտորներից,
 Մայթերում անհրաժեշտության դեպքում ա/բ ծածկի քանդում, խճե հիմքի ուղղում խճով կամ
 ֆրեզավորված ասֆալտբետոնով,
 Երթևեկելի մասի հիմնատակի մշակում բիտումային էմուլսիայով,
 Վերոգրյալ աշխատանքների թաքնված աշխատանքների ակտը տեխնիկական հսկողությունն
 իրականացնող կազմակերպության և պատվիրատուի կողմից հաստատելուց հետո իրականացնել
 ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի տեղադրում 3-4սմ հաստությամբ,
 Շին աղբի բարձում և տեղափոխում,
 Նշված աշխատանքները պետք է իրականացվեն **Էրերունի վարչական շրջանի** կողմից տրվող
 պատվեր-առաջադրանքների հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան,
 Կապալառուն, պատվեր-առաջադրանքը ստանալուց հետո, պատվիրատուին է ներկայացնում կատարվելիք աշխատանքների սխեմատիկ հատակագիծը և նախատեսված ա/բ խառնուրդի բաղադրության ընտրության արդյունքները:
 Կապալառուն աշխատանքները սկսելուց առաջ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության և Պատվիրատուի ներկայացուցչի հետ միասին, տեղում ուսումնասիրում է և սխեմատիկ հատակագծի վրա նշում է կատարվելիք աշխատանքների տեղը և ծավալները, ներկայացնում Պատվիրատուի հաստատմանը,
 Օբյեկտի ավարտը փաստագրելու համար Կապալառուն գրավոր Պատվիրատուին է ներկայացնում կատարողական գծագրերը, ամբողջ գործընթացի լուսանկարները, թաքնված աշխատանքների ակտերը, օգտագործված շինարարական նյութերի որակը հավաստող փաստաթղթերը ճշգրիտ և լրիվ գրառումներով (երկու օրինակից),
 Օբյեկտը ավարտված է համարվում օբյեկտի ավարտը փաստագրող համապատասխան ակտը պատվիրատուի կողմից հաստատելուց հետո:

ՆԱԽԱՀԱՇԻՎ- ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Երևանի Կենտրոն վարչական շրջանի համայնքային նշանակության փողոցների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքների

հազար դրամ					
N	ՀԵՅԻ 3 ՆՅՆՇ 3 ԿԻ 3 ԿճՈՒԱ	ՁՅ Գ ՍՇ Գ ճճԱ	Լ 3 Ի 3 Է	ՕՇՅ Գ ճճՇ ԿՄ	ԱՍ .
1	Վարչական շրջանի բակային ճանապարհների, տարածքների և մայթերի ասֆալտբետոնե ծածկի քանդում, բարձում, տեղափոխում թափոնատեղ, անհրաժեշտության դեպքում խճի հիմքի իրականացում մինչև 10% ասֆալտբետոնյա ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ	քմ	4000	3127.8	12511.2
				ԱՅԻՅ ՍՅՂԱ	12511.2
				ԽՅ ՆճՈՒԱ 11 %	1376.2

	ԱՄՆ ԴՆԱ	13887.5
	20%	2777.5
	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՆԱ	16665.0

Տեխնիկական Բնութագիր

Երևանի Կենտրոն վարչական շրջանի համայնքային նշանակության փողոցների և մայրերի ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքների

<ol style="list-style-type: none"> Նախապատրաստական աշխատանքներ կոմպլետով, Դիտահորերի և անձրևոսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում, Բոլոր ճաքերի համատարած ճաքալցում, փոսային նորոգում, Գոյություն ունեցող ծածկի մաքրում կեղտից, փոշուց և առաջացած ասֆալտբետոնյա կտորներից, Մայրերում անհրաժեշտության դեպքում ա/բ ծածկի քանդում, խճե հիմքի ուղղում խճով կամ ֆրեզավորված ասֆալտբետոնով, Երթևեկի մասի հիմնատակի մշակում բիտումային էմուլսիայով, Վերոգրյալ աշխատանքների թաքնված աշխատանքների ակտը տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպության և պատվիրատուի կողմից հաստատելուց հետո իրականացնել ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի տեղադրում 3-4սմ հաստությամբ, Շին աղբի բարձում և տեղափոխում, Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի կողմից տրվող պատվեր-առաջադրանքների հիման վրա: ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՆՐԱՔ Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, Կապալառու, պատվեր-առաջադրանքը ստանալուց հետո, պատվիրատուին է ներկայացնում կատարվելիք աշխատանքների սխեմատիկ հատակագիծը և նախատեսված ա/բ խառնուրդի բաղադրության ընտրության արդյունքները: Կապալառուն աշխատանքները սկսելուց առաջ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության և Պատվիրատուի ներկայացուցչի հետ միասին, տեղում ուսումնասիրում է և սխեմատիկ հատակագծի վրա նշում է կատարվելիք աշխատանքների տեղը և ծավալները, ներկայացնում Պատվիրատուի հաստատմանը, Օբյեկտի ավարտը փաստագրելու համար Կապալառուն գրավոր Պատվիրատուին է ներկայացնում կատարողական գծագրերը, ամբողջ գործընթացի լուսանկարները, թաքնված աշխատանքների ակտերը, օգտագործված շինարարական նյութերի որակը հավաստող փաստաթղթերը ճշգրիտ և լրիվ գրառումներով (երկու օրինակից), Օբյեկտը ավարտված է համարվում օբյեկտի ավարտը փաստագրող համապատասխան ակտը պատվիրատուի կողմից հաստատելուց հետո:
--

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակերի և միջբակային ճանապարհների ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքների					
Նախահաշիվ - ծավալաթերթ					
					Հազ. դրամ
N/N	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը

1	Բակային ճանապարհների և տարածքների ասֆալտբետոնյա ծածկի քանդում, բարձում, տեղափոխում թափոնատեղ,, անհրաժեշտության դեպքում խճի հիմքի իրականացում մինչև 10% ասֆալտբետոնյա ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ	քմ	17000	3002.130	51036.210
	Ընդամենը				51036.210
	Շահույթ 11 %				5613.983
	Ընդամենը				56650.193
	Ընդամենը				56650.193
	ԱԱՀ 20 %				11330.039
	Ընդամենը				67980.232

Տեխնիկական Բնութագիր
Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի բակերի և միջբակային ճանապարհների ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքների

1.Նախապատրաստական աշխատանքներ կոմպրեսորով
2.Դիտահորերի և անձրևտրսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում
3.Բոլոր ճաքերի համատարած ճաքալցում,փոսային նորոգում
4.Գոյություն ունեցող ծածկի մաքրում կեղտից,փոշուց և առաջացած ասֆալտբետոնյա կտորներից
5.Մայթերում անհրաժեշտության դեպքում ա/բ ծածկի քանդում, հիմքի ուղղում դում խճով կամ ֆրեզավորված ասֆալտբետոնով
6.Երթևեկելի մասի հիմնահատակի մշակում բիտումային էմուլսիայով
7.Վերոգրյալ աշխատանքների թաքնված աշխատանքների ակտը տեխնիկական Հսկողությունն իրականացնող կազմակերպության և պատվիրատուի կողմից հաստատելուց հետո իրականացնել ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի տեղա-դրում 3-4սմ հաստությամբ
8.Շին.աղբի բարձում և տեղափոխում
9.Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից տրվող պատվեր-առաջադրանքի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1.Աշխատանքները իրականացնել շինարարական նորմերին,կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան

2.Կապալառուն,պատվեր-առաջադրանքը ստանալուց հետո,պատվիրատուին է ներկայացնում կատարվելիք աշխատանքների սխեմատիկ հատակագիծը և նախատեսված ա/բ խառնուրդի բաղադրության ընտրության արդյունքները

3.Կապալառուն աշխատանքները սկսելուց առաջ տեխնիկական հսկողութ- յուն իրականացնող կազմակերպության և Պատվիրատուի ներկայացուցչի հետ միասին, տեղում ուսումնասիրում է և սխեմատիկ հատակագծի վրա նշում է կատարվելիք աշխատանքների տեղը և ծավալները, ներկայացնում Պատվիրատուի հաստատմանը

4.Օրբեկտի ավարտը փաստագրելու համար Կապալառուն գրավոր Պատվիրա-տուին է ներկայացնում կատարողական գծագրերը, ամբողջ գործընթացի լու-սանկարները, թաքնված աշխատանքների ակտերը, օգտագործված շինարա- րական նյութերի որակը հավաստող փաստաթղթերը ճշգրիտ և լրիվ գրառում- ներով/երկու օրինակից/
5.Օրբեկտը ավարտված է համարվում օրբեկտի ավարտը փաստագրող համապատասխան ակտը պատվիրատուի կողմից հաստատելուց հետո

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ

(հազ. դրամ)

N	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Չ/Մ	ՔԱՆԱԿ	ՄԻԱՎՈՐԻ ԳԻՆԸ /հազ. դր/	ԸՆԴԱՄԵՆԸ /հազ. դր/
---	-----------------------	-----	-------	------------------------	--------------------

1	Բակային ճանապարհների, տարածքների և մայթերի ասֆալտբետոնյա ծածկի քանդում, բարձում, տեղափոխում թափոնատեղի, անհրաժեշտության դեպքում խճի հիմքի իրականացում մինչև 10% ասֆալտբետոնյա ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ	քմ	2450,0	3,004	7359,800
	ԸՆԴԱՄԵՆԸ				7359,800
